ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԷՐԵԲՈՒՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

«09» 12 2020 թ.
№ 24/1-5/242193

ք. Երևան, Սասունցի Դավթի փող., հ. 87
հեռ.՝ (+374 11) 518 304
էլ.փոստ՝ erebouni@yerevan.am

«ԶԱՔԱՐՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՓԲԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Է. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ
ք. Երևան, Աղբյուր Սերոբի փ. 10 շ 30 բն

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրն մասնակի միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԶԱՔԱՐՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 17.08.2020 թվականին կնքված «ԵՔ–ԳՀԱՇՁԲ–20/94» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի /այսոհետ պայմանագիր/ N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթեր-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի հենապատերի վերանորոգման աշխատանքները /այսուհետ՝ աշխատանք/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Ընկերության կողմից պայմանագրով ստանձնած՝ Երևան քաղաքի, Վարդաշենի 9-րդ փողոցում գտվող 22,30մ երկարությամբ և միջինը 2,10մ բարձրությամբ հենապատի կառուցման շինարարական աշխատանքների կատարման պարտավորությունները՝ 7.702.704 (յոթ միլիոն յոթ հարյուր երկու հազար յոթ հարյուր չորս) ՀՀ դրամ արժեքով ընդհանրապես չեն կատարվել:

Նշված պայմանագրով աշխատանքների հանձման վերջնաժամկետ էր սահմանվել՝ 25.12.2020 թվականը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Վերը նշված պայմանագրերի 3.1.4 կետի համաձայն պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները եթե.
ա) կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար...:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյամբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԶԱՔԱՐՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՓԲ ընկերությունն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 26.11.2020թ. 24/1-8/23269ել գրության պահանջը, հետևաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է ««ԶԱՔԱՐՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՓԲԸ հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Կատ.՝ Մ. Մելքոնյան
011 518342